**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

№_____-Ա «____» _____ **2021թ.** **ք.Երևան**

## ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշման պահանջները և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մոնիթորինգը պատշաճ իրականացնելու նպատակով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ստեղծել՝

1) պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումների (այսուհետ՝ մոնիթորինգ) արձանագրությունների արդյունքների քննարկման, հաստատման և առաջարկություններ ներկայացնելու նպատակով, հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մոնիթորինգի տարեկան ծրագրին համապատասխան և սահմանված ժամկետում մոնիթորինգ իրականացնելու և արձանագրություններ կազմելու նպատակով աշխատանքային խումբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Պետական գույքի տնօրինման վարչության պետին՝ հիմք ընդունելով պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգում առկա տեղեկատվությունը մինչև սույն թվականի մայիսի 15-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա համար մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 5-ը Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) համապատասխան մոնիթորինգի ենթակա պետական մարմիններին ամրացված, ինչպես նաև կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման պայմանագրերով

տրամադրված պետական սեփականություն համարվող անշարժ գույքի՝ (այսուհետ՝ գույք) ըստ առաջնահերթության անվանացանկը, այդ թվում նաև առանձնացնելով այն կազմակերպությունների և հիմնադրամների գույքը, որոնք ունեն իրենց անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքի տարածքներից օգտագործման (վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման) նպատակով տրամադրված տարածքներ:

3. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետին՝

1) սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալուց հետո, ըստ կազմակերպությունների 10 աշխատանքային օրվա ընթացքում, որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջին համապատասխան կազմել գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի հաստատմանը,

2) սույն կետի 1-ին ենթակետով գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը հաստատվելուց հետո, այն տրամադրել Քարտուղարությանը՝ Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրելու համար,

3) սույն կետի 1-ին ենթակետով գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը հաստատվելուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով ստեղծված աշխատանքային խումբը ձևավորելու նպատակով դիմել համապատասխան ստորաբաժանումներին և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին թեկնածուներ ներկայացնելու համար,

4) սույն կետի 3-րդ ենթակետով առաջարկվող թեկնածուների մասնակցությամբ, 2 աշխատանքային օրվա ընթացքում, մշակել սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով ստեղծված աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատելու մասին հրամանի նախագիծը և ներկայացնել Կոմիտեի նախագահի հաստատմանը: Աշխատանքային խումբն իր գործունեությունը պետք է իրականացնի որոշման և սույն հրամանի պահանջներին համապատասխան: Աշխատանքային խումբը յուրաքանչյուր միավոր գույքի մոնիթորինգը պետք է իրականացնի մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Իրավաբանական վարչության պետին՝ սույն հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը հաստատվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանի 1-ի կետի 2-րդ ենթակետով ստեղծվող աշխատանքային խմբին տրամադրել որոշմամբ սահմանված N 3 ձևին համապատասխան

օգտագործողի կողմից անհատույց օգտագործման, վարձակալության և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերով (Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն, 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն, 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1955-Ն և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1130-Ն որոշումներով) օգտագործման տրամադրված անշարժ գույքի մասին տեղեկատվությունը և պայմանագրերի պատճենները:

5. Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ ապահովել անհրաժեշտության դեպքում սույն հրամանի 3-րդ կետի 3-րդ ենթակետով աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի գործուղման հրամանը:

6. Աշխատանքային խմբին՝

1) որոշմամբ և սույն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և ժամկետում պետք է իրականացնի մոնիթորինգ և արդյունքները ներկայացնի Հանձնաժողովի քննարկմանն ու հաստատմանը,

2) հավաքագրված տեղեկատվության հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել մոնիթորինգի արդյունքները, իրականացնել արդյունքների վերլուծություն և իրավական գնահատում ու 4 աշխատանքային օրվա ընթացքում կազմել մոնիթորինգի վերաբերյալ արձանագրություն՝ որոշմամբ հաստատված N 1 ձևին համապատասխան և ներկայացնել Հանձնաժողովի քննարկմանն ու հաստատմանը,

3) Հանձնաժողովի կողմից գույքի մոնիթորինգի արձանագրությունը քննարկելուց և հաստատելուց հետո, եթե գույքի մոնիթորինգի իրականացման արդյունքում հայտնաբերվել են օրենսդրական և պայմանագրային խախտումներ, թերություններ և բացթողումներ, ապա այդ մասին գրությամբ ներկայացնել պետական գույքն օգտագործողին, որը գրությունը ստանալուց հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկի առկա խախտումները, թերությունները և բացթողումները և համապատասխան գրությամբ դրա մասին տեղեկացնի Կոմիտե, իսկ նշված ժամկետում առկա խախտումները, թերությունները և բացթողումները շտկելու անհնարինության դեպքում՝ լրացուցիչ ժամկետ սահմանելու համար ներկայացնի համապատասխան հիմնավորումներ,

4) գույքի մոնիթորինգի արդյունքում օգտագործողի կողմից վնաս պատճառած խախտումները, թերությունները և բացթողումները չընդունելու կամ դրանք ընդունելու և սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետներում չվերացնելու դեպքում, այդ մասին

գրությամբ տեղեկացնել կազմակերպության վերադաս մարմնին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

7. Հանձնաժողովին՝

1) 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկել սույն հրամանի 6-րդ կետի 2-րդ ենթակետով աշխատանքային խմբի կողմից տրամադրված յուրաքանչյուր միավոր գույքի մոնիթորինգի արձանագրությունը և ընդունել այն հաստատելու մասին որոշում,

2) սույն կետի 1-ին ենթակետով ընդունված որոշումներում արձանագրված գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների չկատարման պատճառով տեղ գտած խախտումները, թերությունները և բացթողումները սույն հրամանի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում օգտագործողի կողմից չվերացնելու դեպքում, հանձնաժողովի նիստի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ տեղեկատվությունը ներկայացնել Կոմիտեի նախագահին,

3) սույն կետի 1-ին ենթակետով ընդունված որոշումների վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո կազմել և ներկայացնել առաջարկություններ Կոմիտեի նախագահին:

8. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետին՝

1) Հանձնաժողովի որոշումների հիման վրա կազմված մոնիթորինգի տարեկան հաշվետվությունը մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ,

2) հաշվետվությունը պետք է բովանդակի հաշվետու ժամանակաշրջանում գույքի մոնիթորինգի տարեկան ծրագրում նշված աշխատանքների իրականացման ընթացքը, նկարագրությունը, որոնք ուղղված են ծրագրի կատարման քանակական ցուցանիշներին, ինչպես նաև առանձին գույքի օգտագործողների կողմից թույլ տված խախտումների, թերությունների վերաբերյալ և դրանց արդյունքում պետական բյուջե չմուտքագրված միջոցների մեծության մասին տեղեկատվությունը:

9. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Կոստանյանին:

31.03.2021

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN GARIK 2811870695

**ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված N 1
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
…… «…..»-ի 2021 թվականի N …… -Ա հրամանի

**Կ Ա Ձ Մ**

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Պետական գույքի տնօրինման վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Մոնիթորինգի ենթակա կազմակերպության (տվյալ գույքը օգտագործողի) ներկայացուցիչը, հանձնաժողովի անդամ

Հավելված N 2
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
…… «…..»-ի 2021 թվականի N …… -Ա հրամանի

# Կ Ա Զ Մ

## ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ

Պետական գույքի տնօրինման վարչության ներկայացուցիչ

Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության ներկայացուցիչ

Իրավաբանական վարչության ներկայացուցիչ